



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՐԱԿԵՆՏՐ



**ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ.
21-րդ դարի մարտահրավերներ
և հնարավորություններ**

**DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century**

**РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
ВЫЗОВЫ И ВОЗМОЖНОСТИ 21-ого века**

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
S 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ

ՀՊՏՀ ռեկտոր, Կ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

- ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ** - ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., դոցենտ
- ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ** - ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր
- ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ** - ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, Կ.գ.դ., պրոֆեսոր
- ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ** - ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, Կ.գ.թ., դոցենտ
- ԱՇՈՏ ՍԱԼԼԱԶԱՐՅԱՆ** - ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր
- ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ** - ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր
- ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ** - ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., Կ.գ.դ., պրոֆեսոր
- ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ** - ՀՊՏՀ պրոռեկտոր, Կ.գ.դ., պրոֆեսոր

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
S 778 հնարավորություններ: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ,
2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՛ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հեղափոխություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրապարակապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հեղափոխական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հեղափոխական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այսօրեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հեղափոխություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահեղափոխական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հեղափոխ գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մատչում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

**ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ՓՈԽԱՆԱԿՎՈՂ ԵՎ ՉՓՈԽԱՆԱԿՎՈՂ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՍԻՆԹԵՏԻԿ
ՀԱՇՎԱՌՄԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Հիմնաբառեր. ծրագրերի ինքնարժեք, դրամական ներհոսք, դրամական արտահոսք, փոխանակվող գործարքներ, չփոխանակվող գործարքներ, բյուջեից ֆինանսավորվում, հասույթ, ծախսեր, դեբիտորական և կրեդիտորական պարտքեր

Հանրային հատվածի կազմակերպությունների տնտեսական գործունեության գործառնությունների սինթետիկ հաշվառման ձևակերպումներ կատարելիս պետք է առաջնորդվել գործառնությունների նպատակաուղղվածության ու բնույթի հստակ տարբերակման մեթոդաբանությամբ:

Նման սկզբունքով է կառուցվել նաև հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանը, որտեղ յուրաքանչյուր երևույթի, դրանց առանձին ենթադասակների համար նախատեսվել են առանձնացված հաշիվներ և ծածկագրեր: Միայն տարբերակման մեթոդաբանության ու հաշվային պլանի ճիշտ ընկալման ու կիրառման արդյունքում է հնարավոր իրականացնել հանրային հատվածի պահանջվող մակարդակի հաշվապահական հաշվառումը, այդ թվում՝ նաև սինթետիկ հաշվառման ձևակերպումները:

Հանրային հատվածի կազմակերպություններ են համարվում պետական կառավարչական հիմնարկները, համայնքային ղեկավարների աշխատակազմերը, պետական ու համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները (ՊՈԱԿ-ները և ՀՈԱԿ-ները): Պետական կառավարչական հիմնարկները ներառում են նախարարություններ, գերատեսչություններ, գործակալություններ, պետական հանձնաժողովներ և այլն:

Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառումը որոշակիորեն տարբերվում է շահույթ հետապնդող, առևտրային կազմակերպությունների հաշվապահական հաշվառումից: Մինչև վերջերս օրենսդրորեն սահմանված չէին ՀՀ հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառումը կազմակերպելու, վարելու և ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու ու ներկայացնելու հիմունքները: Դրանք կարգավորվում էին գործող ՀՀՄՍ-ների ու հաշվային պլանի պահանջներին համապատասխան, որոնք բովանդակության ու գործունեության ընդգրկման տեսակետից խիստ ծավալուն են և նախատեսված տարբեր բնագավառներում գործունեություն իրականացնող կազմակերպությունների համար, ուստի դրանց՝ այդ ծա-

վալով կիրառումը նպատակահարմար չեն հանրային հատվածի կազմակերպությունների համար¹: Անհրաժեշտություն էր առաջացել տարբերակելու հանրային ոլորտների կազմակերպությունների հաշվապահական հաշվառման իրականացման կարգը, քանի որ տարբեր են հաշվառման, ֆինանսական հաշվետվությունների կազմման, ներկայացման ու հրապարակման պահանջները: ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման բարեփոխումների շրջանակներում նախատեսվում էր նախկինում գործող հաշվապահական հաշվառման համակարգից անցում կատարել հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային չափանիշներին համապատասխանող համակարգի: Այդ բարեփոխումների առաջին ձեռնարկումը եղավ ՀՀ ֆինանսների նախարարի 2014 թ. N 725՝ «ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառում սահմանելու մասին» հրամանը, որով ներդրվեցին Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտը և հաշվային պլանը²: Դա կարևոր քայլ է հանրային հատվածի հաշվապահական հաշվառումը կարգավորելու, ինչպես նաև որոշակիորեն պարզեցնելու համար: Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտը (ՀՀՀՀՍ) կազմված է տարբեր բաժիններից, որոնցից յուրաքանչյուրը կարգավորում է տարբեր երևույթներ:

Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտները (ՀՀՀՀՍ) կիրառվում են բոլոր համապատասխան կազմակերպությունների կողմից՝ բացառությամբ պետական առևտրային կազմակերպությունների (ՊԱԿ):

Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման առանձնահատկությունների ընդգծված դրսևորումները պայմանավորված են տվյալ հատվածի կազմակերպությունների գործառույթների բնույթով ու բնագավառներով, ինչպես նաև դրանցում կատարվող գործառնություններով: Տարբերակումները կատարված են տարբեր սկզբունքներով ենթադասակարգմամբ: Հատկապես հստակ տարբերակում է կատարված պետական բյուջեի գործառույթներին և հանրային հատվածի մյուս կառույցների գործառույթներին վերաբերվող հաշվապահական հաշվառման սինթետիկ հաշվառման ձևակերպումների գծով:

Հանրային հատվածում բյուջեներից ֆինանսավորումը կատարվում է բյուջետային միջոցների հաշվին՝ պետական կառավարչական հիմնարկներից կամ համայնքի ղեկավարի անձնակազմից, ինչպես նաև պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններից (ՊՈԱԿ, ՀՈԱԿ) ծառայություններ ձեռք բերելու համար:

Հանրային հատվածում կան կառույցներ, որոնց հիմնական խնդիրներն են հասույթների հավաքագրումը և ֆինանսավորման կարգով դրանց տեղաբաշխումը պետական և հանրային (հասարակական) նշանակության ծրագրային առաջադրանքներ իրականացնող կազմակերպություններին: Կան կառույցներ, որոնք ֆինանսավորմամբ ստանում են միջոցներ և բացի այդ, իրենց հերթին, իրենք են ֆինանսավորում՝ իրենց կողմից մատուց-

¹ ՀՀ ֆինանսների նախարարի 2015 թ. N 207՝ «ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման հաշվային պլան սահմանելու մասին» հրամանը:

² ՀՀ ֆինանսների նախարարի 2014 թ. N 725՝ «ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառում սահմանելու մասին» հրամանը:

վող ծառայությունների կատարմանն անհրաժեշտ (պահանջվող) ծախսերի նպատակով: Դրանց կողքին կան նաև կազմակերպություններ, որոնք պարզապես բյուջեից ստանում են ֆինանսավորում իրենց հանձնարարված ծրագրային առաջադրանքները կատարելու համար: Այսպես, օրինակ, պետական բյուջեի հիմնական գործառույթներն են երկրի պետական և հասարակական կարիքները հոգալու նպատակով տարաբնույթ հասույթների տեսքով միջոցների հավաքագրումը (գանձումը) և նշված բնագավառներում պետական ծրագրային առաջադրանքների կատարողներին ֆինանսավորելը:

Համայնքների ղեկավարի աշխատակազմի մատուցած ծառայությունների դիմաց վերջիններս բյուջեից ստանում են ֆինանսավորում: Սակայն, իրենք էլ իրենց հերթին, տեղական (համայնքային) բյուջեից ֆինանսավորում են իրենց լիազորությունների շրջանակներում իրականացվող գործառույթները (համայնքային ճանապարհների կառուցում ու բարեկարգում, փողոցների լուսավորություն, ջրագծերի անցկացում, նախակրթարանների պահպանում ու շահագործում և այլն):

Հանրային հատվածի մեկ այլ՝ սովոր հատված բյուջեի ֆինանսավորմամբ իրականացնում է իր առջև դրված ծրագրային առաջադրանքները: Օրինակ՝ ՊՈԱԿ-ները բյուջեից ֆինանսավորվում են հանձնարարված հստակ առաջադրանքների իրականացման համար: Բնականաբար, բյուջեներից՝ վերը նշված նպատակների համար կատարվող ֆինանսավորումը, ըստ ֆինանսավորողի և ֆինանսավորում ստացողի, կատարվում է տարանջատված ու տարբերակված կարգով՝ առաջինի մոտ որպես ծախս, իսկ երկրորդի մոտ՝ որպես մատուցված ծառայությունների հասույթ ճանաչելու ու հաշվառելու կարգով:

Հաջորդ տարբերակումը վերաբերում է հանրային հատվածի կազմակերպությունների գործառույթների բնույթին՝ ըստ որի հանրային հատվածի գործառույթները ու դրանց հասույթներն ու ծախսերը դասակարգվում են որպես չփոխանակվող և փոխանակվող գործարքներից հասույթներ և ծախսեր:

Փոխանակվող գործարքների նկարագրությունը, հաշվապահական հաշվառման բացահայտումները և հաշվառումը կանոնակարգվում են ՀՀՀՀՍ «Փոխանակվող գործարքներից հասույթ» բաժին 25-ում: **Փոխանակվող** են այն գործարքները, որոնց դեպքում մեկ կազմակերպություն ստանում է ակտիվներ կամ ծառայություններ կամ մարում պարտավորություններ և դրանց դիմաց, որպես փոխանակում, մեկ այլ կազմակերպություն ուղղակիորեն տալիս է դրանց հավասար արժեքը (հիմնականում՝ դրամական միջոցների կամ ֆինանսավորման տեսքով): Փոխանակվող գործարքներ են ծառայության մատուցումը, ապրանքների վաճառքը, այլ անձանց կողմից կազմակերպության ակտիվների օգտագործումը:

Ծառայությունների մատուցումը ներառում է կազմակերպության կողմից հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում համաձայնեցված առաջադրանքի (աշխատանքների) կատարում: Հանրային հատվածի կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների օրինակ են.

- պետական կառավարչական հիմնարկների և համայնքների ղեկավարների աշխատակազմի միջոցով պետական և համայնքային բյուջեների շրջանակներում

հանրությանը մատուցվող ծառայությունները,

- պետական ու համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների միջոցով մատուցվող ծառայությունները:

Ապրանքները ներառում են կազմակերպության կողմից վաճառքի համար թողարկված արտադրանքը (ՊՈԱԿ-ների հրապարակումները, վաճառքի համար գնված ու պահվող ապրանքները և այլն):

Այլ անձանց կողմից կազմակերպության ակտիվների օգտագործումը բերում է հասույթ տոկոսների, ռոյալթիների և շահաբաժինների տեսքով:

Չփոխանակվող գործարքների նկարագրությունը, հաշվապահական հաշվառման բացահայտումները և հաշվառումը կանոնակարգվում են ըստ ՀՀՀՀՍ «Չփոխանակվող գործարքներից հասույթ» բաժին 26-ի: Չփոխանակվող գործարքի դեպքում կազմակերպությունը մեկ այլ կազմակերպությունից կա՛մ ստանում է արժեք՝ առանց մոտավորապես հավասար արժեքը որպես փոխանակում ուղղակիորեն տալու, կա՛մ տալիս է արժեք՝ առանց մոտավորապես հավասար արժեքը որպես փոխանակում ուղղակիորեն ստանալու: Չփոխանակվող գործարքներին են վերաբերում հարկերը, տրանսֆերտները՝ ներառյալ դրամաշնորհները, պարտքի ներումը, փույթերը և տուգանքները, նվերները, նվիրատվությունը, ինչպես նաև անհատույց ապրանքները և ծառայությունները:

Հարկերը համարվում են չփոխհատուցվող գործարք, քանի որ հարկ վճարողը միջոցները փոխանցում է պետությանը՝ առանց դրանց դիմաց հավասար արժեքը որպես փոխանակում ստանալու: Ճիշտ է, հարկ վճարողն անուղղակիորեն սոցիալական ու պաշտոնական բնույթի տարբեր ծրագրերի շրջանակում ստանում է փոխհատուցում (գիտություն, կրթություն, երկրի ու հասարակական կարգի պահպանություն, առողջապահություն), սակայն դա չի հանդիսանում փոխանակում:

Այս դեպքում հարկումից հասույթն առաջանում է միայն պետության կամ համայնքի և ոչ թե հանրային հատվածի այլ կազմակերպությունների համար:

Փոխանակվող և չփոխանակվող գործարքներից ձևավորված հասույթների և ծախսերի, դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշվապահական հաշվառման, սինթետիկ հաշվառման ձևակերպումները կատարվում են հստակ տարբերակումով:

Փոխանակվող գործարքներից հասույթներին են վերաբերում բյուջեից ֆինանսավորմամբ ծառայությունների մատուցումից (ծրագրերի իրականացումից), հաճախորդներին մատուցված ծառայություններից, պաշարների, ոչ ընթացիկ ակտիվների և ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից, ֆինանսական ներդրումներից հասույթները ու արտարժույթի փոխարժեքային տարբերություններից և նյութական ակտիվների վերաչափումից օգուտները:

Փոխանակվող գործարքներից ծախսերին են վերաբերում բյուջեից ֆինանսավորմամբ ծառայությունների մատուցման (ծրագրերի ինքնարժեքը)՝ աշխատանքի վարձատրության, ԱՆԱ-ների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման, բաշխման, վարչական, ֆինանսական, ոչ ընթացիկ ակտիվների ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից, ընթացիկ նորոգման, արտարժույթի փոխարժեքային տարբերություններ-

րից, տոկոսավճարներից ծախսերը:

Չփոխանակվող գործարքներից հասույթներին են վերաբերում՝

- չփոխանակվող գործարքներից կազմակերպությունների հասույթները (պայմանով ստացված ոչ ընթացիկ և ընթացիկ ակտիվների հետ կապված, առանց պայմանի կատարման պահանջի (անհատույց) ստացված ակտիվների գծով և այլն):
- չփոխանակվող գործարքներից բյուջեի հասույթները (հարկումից, պաշտոնական դրամաշնորհներից, տույժերի և տուգանքներից, այլ հասույթներ):

Չփոխանակվող գործարքներից ծախսերին են վերաբերում չփոխանակվող գործարքների գծով կազմակերպությունների ծախսերը (շահութահարկի, անհատույց օգտագործմամբ տրված հիմնական միջոցների (<Մ) մաշվածության, հիմնական միջոցների լուծարումից, արժեքների պակասորդից և փչացումից կորուստների, տույժերի և տուգանքների, դատական և այլ ծախսեր):

Պետական բյուջեից հանրային հատվածի կազմակերպություններին ֆինանսավորում կատարելիս սինթետիկ հաշվառման ձևակերպումները կատրվում են հետևյալ կարգով.

ա)

▪ Պետական կառավարչական հիմնարկների և համայնքի ղեկավարի աշխատակազմի կողմից մատուցվող բյուջեներից ֆինանսավորմամբ ծառայությունների ձեռքբերման գծով ծախսը և պարտքը ձևակերպվում է՝

1. Դտ 757 «Պետական կառավարչական հիմնարկների և համայնքի ղեկավարի աշխատակազմերի կողմից մատուցվող բյուջեից ֆինանսավորմամբ ծառայությունների ձեռքբերման գծով ծախսեր»

Կտ 557 «Պարտքեր պետական կառավարչական հիմնարկների և համայնքի ղեկավարի աշխատակազմերի կողմից մատուցված ծառայությունների գծով»

▪ Պետական կառավարչական հիմնարկների և համայնքի ղեկավարի աշխատակազմի կողմից մատուցվող բյուջեներից ֆինանսավորմամբ ծառայությունների պարտքի մարումը դրամական արտահոսքով ձևակերպվում է՝

2. Դտ 557 Պարտքեր պետական կառավարչական հիմնարկների և համայնքի ղեկավարի աշխատակազմերի կողմից մատուցված ծառայությունների գծով»

Կտ 0711 «Բյուջետային միջոցների հաշվին պետական կառավարչական հիմնարկներից կամ համայնքի ղեկավարի աշխատակազմից ծառայություններ ձեռքբերելու համար կատարված արտահոսքեր»

▪ Պետական կառավարչական հիմնարկների և համայնքի ղեկավարի աշխատակազմի կողմից մատուցվող բյուջեներից ֆինանսավորմամբ ծառայությունների պարտքի մարումը կատարված դրամական արտահոսքերի հաշվին ձևակերպվում է՝

3. Դտ 0711 «Բյուջետային միջոցների հաշվին պետական կառավարչական հիմնարկներից կամ համայնքի ղեկավարի աշխատակազմից ծառայություններ ձեռքբերելու համար կատարված արտահոսքեր»

Կտ 252 «Գանձապետական հաշիվներ»

Կտ 255 «Գանձապետական միասնական հաշիվ»

բ)

▪ Պետական և համայնքային ոչ առևտրական կազմակերպությունների կողմից մատուցվող բյուջեներից ֆինանսավորմամբ ծառայությունների գծով ծախսերի և պարտքի ձևավորում ձևակերպվում է՝

1. Դտ 758 «Պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կողմից մատուցվող բյուջեից ֆինանսավորմամբ ծառայությունների ձեռքբերման գծով ծախսեր»

Կտ 558 «Պարտքեր պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կողմից մատուցված ծառայությունների գծով»

▪ Պետական և համայնքային ոչ առևտրական կազմակերպությունների կողմից մատուցվող բյուջեներից ֆինանսավորմամբ ծառայությունների պարտքի մարումը դրամական արտահոսքով ձևակերպվում է՝

2. Դտ 558 «Պարտքեր պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կողմից մատուցված ծառայությունների գծով»

Կտ 0711 «Բյուջետային միջոցների հաշվին պետական կառավարչական հիմնարկներից կամ համայնքի ղեկավարի աշխատակազմից ծառայություններ ձեռքբերելու համար կատարված արտահոսքեր»

▪ Պետական և համայնքային ոչ առևտրական կազմակերպությունների կողմից մատուցվող բյուջեներից ֆինանսավորմամբ ծառայությունների պարտքի մարումը կատարված դրամական արտահոսքերի հաշվին ձևակերպվում է՝

3. Դտ 0711 «Բյուջետային միջոցների հաշվին պետական կառավարչական հիմնարկներից կամ համայնքի ղեկավարի աշխատակազմից ծառայություններ ձեռքբերելու համար կատարված արտահոսքեր»

Կտ 252«Գանձապետական հաշիվներ»

Կտ 255«Գանձապետական միասնական հաշիվ»

Իր հերթին, պետական բյուջեից ֆինանսավորում ստանալու դեպքում **հանրային հատվածի կազմակերպություններում ձևակերպվում է՝**

1. Դտ 9941 «Պետական կառավարչական հիմնարկների և համայնքի ղեկավարի աշխատակազմերի կողմից՝ բյուջեից ֆինանսավորմամբ մատուցված ծառայությունների գծով ներհոսքեր»

Կտ 221 «Դեբիտորական պարտքեր փոխանակվող գործարքների գծով»

▪ Բյուջեից վերը նշված նպատակների համար կանխավճարի առաջացումը՝ դրամական ներհոսքերի միջոցով ձևակերպվում է՝

2. Դտ 9941 «Պետական կառավարչական հիմնարկների և համայնքի ղեկավարի աշխատակազմերի կողմից՝ բյուջեից ֆինանսավորմամբ մատուցված ծառայությունների գծով ներհոսքեր»

Կտ 523 «Ստացված կանխավճարներ փոխանակվող գործարքների գծով»

▪ հաճախորդներին մատուցված ծառայությունների գծով դեբիտորական պարտքերի մարումը կամ կանխավճարների հառաջացումը դրամական ներհոսքերի միջոցով ձևակերպվում է՝

3. Դտ 994₃ «Հաճախորդներին մատուցված ծառայություններից ներհոսքեր»

Կտ 523 «Ստացված կանխավճարներ փոխանակվող գործարքների գծով»

Կտ 221 «Դեբիտորական պարտքեր փոխանակվող գործարքների գծով»

▪ հաճախորդներին մատուցված ծառայությունների գծով դեբիտորական պարտքերի մարման և կանխավճարների ստացման հետ կապված դրամական ներհոսքերի գծով ձևակերպվում է՝

4. Դտ 251, 252, 253 (Դրամական միջոցները հաշվառող հաշիվներ)

Կտ 994₃ «Հաճախորդներին մատուցված ծառայություններից ներհոսքեր»

▪ բյուջեից ֆինանսավորմամբ ծառայությունների մատուցման գծով դեբիտորական պարտքերի մարման կամ դրանց գծով կանխավճարների ստացման հետ կապված դրամական ներհոսքերի արտացոլումը ձևակերպվում է՝

5. Դտ 252 «Գանձապետական հաշիվներ»

Կտ 994 «Փոխանակվող գործարքներից ներհոսքեր կազմակերպություն»

(դասակարգումներում չարտացոլված)

Նման մեթոդաբանություն կիրառվում է նաև պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կողմից՝ բյուջեից ֆինանսավորմամբ մատուցված ծառայությունների գծով դրամական ներհոսքերի դեպքում՝ միայն թե ձևակերպելով 9942 հաշվով:

ГАГИК НАЛБАНДЯН

МЕТОДОЛОГИЯ ДИФФЕРЕНЦИАЦИИ СИНТЕТИЧЕСКОГО УЧЕТА ОБМЕННЫХ И НЕОБМЕННЫХ СДЕЛОК В ОРГАНИЗАЦИЯХ ОБЩЕСТВЕННОГО СЕКТОРА

Ключевые слова: себестоимость программ, приток денежных средств, отток денежных средств, обменные сделки, необменные сделки, финансирование из бюджета, выручка, расходы, дебиторские и кредиторские задолженности

Подводя итоги этой статьи, из вышесказанного следует, что при выполнении формулировки синтетического учета операций экономической деятельности субъектов общественного сектора, мы должны руководствоваться методологией четкой дифференциации характера и направленности функций.

Это основано на финансирующих и финансируемых, получателя услуг и предоставляющих услуги, обменивающихся (конвертирующих) и необменивающихся сделках (транзакциях) и их характеризующих дифференциациях.

По тому же принципу построен счетный план бухгалтерского учета в общественном секторе, где для каждого явления, их отдельного подвида предусмотрены отдельные счета и коды.

Только в результате правильного восприятия и применения счетного плана и дифференцированной методологии возможно осуществить бухгалтерский учет требуемого уровня в общественном секторе, в том числе и формулировка (проводка) синтетического учета.

GAGIK NALBANDYAN

METHODOLOGY OF DIFFERENTIATION IN SYNTHETIC BOOKKEEPING OF EXCHANGEABLE AND NON- EXCHANGEABLE TRANSACTIONS IN PUBLIC SECTOR ORGANIZATION

Key words: *program cost, cash flow, cash outflow, exchangeable transactions, budget financing, expenses, revenue, debit and credit acclaim*

Summarizing the article, it follows from the above mentioned that while formulating synthetic bookkeeping records of economic activity of public sector entities one should be guided by the methodology of distinct differentiation of transaction features and objectives.

It is based on financing and financed, service rendering and service obtaining exchangeable and non- exchangeable transactions and their featuring versions.

A similar principle has been applied to design the accounting keeping lists of public sector entities in which each issue and sub-type is given a separate account and code.

Only through differentional methodology and the right perception and application of the accounting plan is it possible to provide the necessary level for public sector entities ' bookkeeping as well as the formulations of synthetic bookkeeping.

ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՊՏՀ

ՍՐԲՈՒՀԻ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

Ասպիրանտ, ՀՊՏՀ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՈՐՈՒԹՅԱՆ, ՄԻԿՐՈՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԴԱՐՁ ԿԱՊԸ ՀՀ-ՈՒՄ

Հիմնաբառեր. *ֆինանսական ներգրավվածություն, միկրոֆինանսավորում, ֆինանսական խորություն, ֆինանսական ծառայություն, կյանքի որակ, տնտեսական աճ*

Ներկա պայմաններում միկրոֆինանսավորումը, ֆինանսական ներգրավվածությունը և տնտեսության ֆինանսական խորությունը հսկայական ներուժ են պարունակում ոչ միայն բնակչության աղքատ հարվածի կենսապայմանների և կյանքի որակի բարելավման, այլև տնտեսական աճի ապահովման համար: Հոդվածում քննարկվում են նշված